

Բանալի բառեր՝ միասնական տնտեսական տարածք, փոխադարձ ձգողություն, արդյունավետ ինտեգրում, զարգացման համաթվեր, կոռուպցիա, գլոբալ մրցունակություն:

ՀՏԴ 339.9(479.25)

ԵԱՏՄ ԵՐԿՐՆԵՐԻ ԻՆՏԵԳՐԱԿԱՆ ԱՐԴԻ ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԴԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Ատենախոսության թեմա՝
Բազմակողմ տնտեսական դիվանագիտության հիմնախնդիրները ԵԱՏՄ շրջանակներում

Ռոբերտ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
ՀՊՏՀ ՄՏՀ ամբիոնի սաայիրանտ

Գիտական դեկավար՝
Կորյուն ԱԹՈՅԱՆ
Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

Խորհրդային միության փլուզումից հետո համակարգի անդամ երկրները՝ Նախկին տնտեսական և քաղաքական կապերը վերականգնելու նպատակով, ակտիվորեն ներգրավվեցին ինտեգրացիոն պլանների մշակման մեջ: Պահանջվեց մեկ տասնյակից ավել ժամանակաշրջան, որպեսզի մշակվի Եվրասիական ինտեգրման նորացման հայեցակարգը, որը պետք է համապատասխանի աշխարհաքաղաքական և աշխարհատնտեսական նոր իրողություններին: 2010-2012 թթ.-ը կարելի է համարել ինտեգրման կտրուկ առաջընթացի շրջան: Շատ կարճ ժամկետում ստեղծվեց Ռուսաստան, Բելառուս և Ղազախստան Մաքսային միությունը, իսկ 2012 թ. հունվարի մեկից սկսվեց Միասնական տնտեսական տարածքի ձևավորումը: Ի հայտ եկավ հստակ հեռանկար. 2015 թ. ստեղծել Եվրասիական տնտեսական միությունը:

Համընդհանուր ընդունված տեսությունների համաձայն միջազգային տնտեսական ինտեգրման արդյունավետությունը որոշիչ չափերով կախված է դրա երկու՝ միմյանց փոխադարձ լրացնելու անհրաժեշտությունն ունեցող ինքնուրույն գործընթացների կորդինացումից¹: Իսկ գիտական համայնքը վաղուց քննարկում է այն հարցը, թե ինտեգրումն ինչպե՞ս է ազդում տնտեսական աճի վրա: Ապրիորի այն գաղափարն է ընդունվում, որ որքան երկրների փոխադարձ ձգողությունը, ներգրավվածությունը բարձր է, այնքան բարձր է դրանց տնտեսական աճի տեմպը: Այդ դեպքում, որպես կանոն, հղում է արվում աշխարհի ամենահաջողված ինտեգրացիոն միավորմանը՝ Եվրամիությանը: Ընդ որում այս մոտեցման ընդդիմախոսները կարևորում են այլ փաստեր. և: Օրինակ, Շվեյցարիայում կամ Նորվեգիայում, որոնք ԵՄ անդամ չեն, տնտեսական աճի և կենսամակարդակի ցուցանիշներն ավելի բարձր են, քան Եվրամիության շատ երկրներում:

Անկախ այդ հանգամանքից, ինտեգրացիոն գործընթացի հաջողությունը պայմանավորված է միասնական տնտեսական տարածքում ապրող և գործող հասարակության որոշակի թվաքանակով: Օրինակ, Չինաստանը, ունենալով մոտ 1.3 միլիարդ բնակչություն, որևէ ինտեգրացիոն դաշինքի կարիք չունի: Նույնը վերաբերում է Հնդկաստանին: Լյուքսեմբուրգը, ըստ այդ մոտեցման, ունի ինտեգրման կարիք: Այսինքն, խոսքն այն մասին է, որ արդյունավետ ինտեգրում կարելի է կազմակերպվել միայն համապատասխան տնտեսական այն տարածքում, որտեղ սահմանափակումներ չկան, իսկ բնակչությունը կազմում է 200-250 մլն մարդ:

Հետխորհրդային երկրներում համակարգային փոփոխությունների տնտեսական և սոցիալական արդյունքների մասին ավել կամ պակաս պատկերացում կարելի է կազմել ՄԱԿ-ի կողմից մշակված Մարդկային զարգացման համաթվի միջոցով: Ուսումնասիրվող տարիներին Նախկին Խորհրդային միության անդամ-երկրները, հիմնականում, այդ ցուցանիշի գծով իրենց դիրքերը բարելավել են (Աղյուսակ 1):

Աղյուսակ 1.

Նախկին ԽՍՀՄ երկրների Մարդկային զարգացման համաթվերը ըստ առանձին տարիների²

Երկրները	Զբաղեցրած տեղը աշխարհի 188 երկրների շարքում		
	2007	2010	2015
Եստոնիա	40	34	37
Լատվիա	48	48	44
Լիտվիա	46	44	37

¹ О. Н. Мисько. Международная экономическая интеграция. Учебное пособие. Университет ИТМО, Санкт-Петербург 2015, ст. 3-14.

² Աղյուսակը կազմվել է Human Development Report 2009. Overcoming Barriers: Human Mobility and Development. UNDP 2010, pp. 167-169. Human Development Report 2010. 20 th Anniversary Edition. UNDP 2011, pp. 148-150. Резюме Доклада человеческого развития 2016. Человеческое развитие для всех и каждого. Цр. 22-26 տվյալների հիման վրա:

Ռուսաստան	71	65	49
Ղազախստան	82	66	56
Բելառուս	68	61	52
Մոլդովա	117	99	107
Ուզբեկստան	119	102	105
Հայաստան	84	76	84
Վրաստան	89	74	70
Ադրբեջան	86	67	78
Թուրքմենիա	109	87	111
Տաջիկստան	127	112	129
Ղրղզստան	120	109	120

Այս տեսանկյունից բազառություն են կազմում միայն Տաջիկստանը և Ղրղզստանը: Եվրամիության անդամակցելուց հետո Մերձբալթյան երեք հանրապետությունների այդ ցուցանիշը էականորեն բարելավվել է: 2007 թ. 40-րդ տեղից, 2015 թ.-ին Եստոնիան աշխարհի 188 երկրների մեջ զբաղեցրել է 37-րդ տեղը, Լատվիան իր դիրքերը բարելավվել է 4 կետով, Լիտվան՝ 9 կետով: Եզված երկրները 2010 թ.-ին արդեն Մարդկային զարգացման համաթվի կտրվածքով բարձր խմբից կայուն կերպով անցում կատարեցին շատ բարձր խմբին: Իրենց դիրքերն էականորեն բարելավել են նաև Ռուսաստանը, Բելառուսը և Ղազախստանը: 2015 թ.-ին Ռուսաստանը բարձր խմբից տեղափոխվել է շատ բարձր խումբ, Ղազախստանը և Բելառուսը շարունակում են մտալ բարձր խմբում: Հայաստանն էլ բարձր խմբի երկիր է, սակայն եթե 2010 թ.-ին 8 կետով իր դիրքերը բարելավվել էր, այնուհանդերձ 2015 թ.-ին գրանցել է անկում, որի արդյունքում վերադարձել է 2007 թ. 84-րդ տեղը: Հարևան երկրների համեմատությամբ Հայաստանի դիրքերը բավականին ցածր են:

Բավականին ցուցադրական է Պետությունների «փխրունության» համաթիվը (State Fragility Index), որը հաշվարկվում է 20 չափանիշների հիման վրա և որոնք ներկայացվում են երեք խմբով՝ սոցիալական, տնտեսական և ռազմաքաղաքական: Երկրի վիճակը գնահատելու նպատակով՝ փորձագետները վերլուծում են հինգ առանցքային պետական ինստիտուտների ունակությունները, որոնք ապահովում են պետության և դրա քաղաքացիների անվտանգությունը, այդ թվում քաղաքական ղեկավարությունը, բանակը, ոստիկանությունը, դատական համակարգը և քաղաքացիական ծառայությունները: Ընդհանուր առմամբ ուսումնասիրվում են 100-ից ավել ցուցանիշներ³:

Աշխարհի 178 երկրների շարքում, վերջին՝ 2015 թ. դասակարգմամբ, ԵԱՏՄ երկրների «փխրունության» համաթիվը ունեցել է հետևյալ արժեքը (Աղյուսակ 2): Հինգ երկրներից երեքը միջինից ցածր կայունություն՝ ռիսկերի վտանգավոր մակարդակ ունեցող երկրներ են, իսկ երկուսը՝ միջինից բարձր կայունություն՝ ռիսկերի ցածր մակարդակ ունեցող երկրներ: 2014 թ. համեմատությամբ Ռուսաստանի, Բելառուսի և Ղազախստանի համաթիվերը վատթարացել են, Ռուսաստանը 85-րդ տեղից բարձրացել է 65-րդ տեղ, Ղազախստանը՝ 111-ից 110, իսկ Բելառուսը՝ 90-րդ տեղից 87-րդ տեղ: Ղրղզստանում և Հայաստանում գրանցվել է համաթվի բարելավվում:

**Աղյուսակ 2.
ԵԱՏՄ երկրների «փխրունության» համաթիվը 2015 թ.⁴**

Չբաղեցրած տեղը	Երկիրը	«Փխրունության» համաթիվը
Միջինից ցածր կայունություն՝ ռիսկերի վտանգավոր մակարդակ ունեցող երկրներ		
62	Ղրղզստան	82.2
65	Ռուսաստան	80.0
87	Բելառուս	75.6
Միջինից բարձր կայունություն՝ ռիսկերի ցածր մակարդակ ունեցող երկրներ		
108	Հայաստան	69.7
110	Ղազախստան	68.3

Եվրասիական տնտեսական միությունը իրավական տեսանկյունից դիտարկելիս, անհրաժեշտ է, ամենից առաջ, տնտեսական դիվանագիտության ենթատեքստում ուսումնասիրել այդ ինտեգրացիոն խմբավորման իրավական ձևակերպումը: Իրավունքի գերակայության գաղափարը, որը միջազգային հարաբերությունների ընդհանուր սկզբունքն է, այս դեպքում հստակորեն արտացոլվում է իրավական գործընթացների շարունակականության և զարգացման մեջ: Միջազգային իրավունքն այն միջոցն է, որը չափում է թույլատրելին, միջազգային հարաբերությունների ցանկացած բնագավառում սուբյեկտների վարքագծի իրավական հավաստման չափանիշն է⁵: Միության շրջանակներում ստեղծվում է միասնական իրավական միջավայր և տնտեսական տարածք, որտեղ պետք է իրականացվի անդամ-պետությունների ֆիզիկական և իրավաբանական անձանց գործունեությունը:

ԵԱՏՄ անդամ պետությունների տնտեսական դիվանագիտության հիմնախնդիրների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ անկախացման տարիներից ի վեր դրանցից յուրաքանչյուրը կարողացել է որոշակիորեն ինտեգրվել համաշխարհային տնտեսական և քաղաքական արդի գործընթացներին: Այդ երկրները միաժամանակ անդամակցում են միջազգային և տարածաշրջանային տարբեր կազմակերպությունների, դիվանագիտական հարաբերություններ են ձևավորել բազմաթիվ երկրների հետ: Տնտեսական դիվանագիտության կողմից լուծվող գլխավոր խնդիրները գլոբալացման պայմաններում նոր

³ Stu` Индексы развития государств мира. Под редакцией Ю. А. Нисневича. Москва 2014, ст. 58.

⁴ <http://gtmarket.ru/news/2015/06/18/7208>

⁵ Klabbbers J. Two Concepts of International Organization // International Organizations Law Review. 2005. N 2. P. 277-293.

հնարավորությունների և առավելությունների օգտագործումն է՝ ազգային տնտեսության մրցունակությունն ամրապնդելու և միջազգային ասպարեզում ռազմավարական նպատակներ նվաճելու, միջազգային առևտրատնտեսական համագործակցությունից առավելագույն օգուտներ ստանալու համար: Սակայն ինդրո առարկա ինտեգրացիոն խմբավորման երկրներում առկա են մի շարք ոչ դրական իրողություններ որոնք չեն կարող չխոչնդոտել տնտեսական խմբավորման վերընթաց զարգացմանը: Այսպես, համագործակցող երկրները համաշխարհային ապրանքային շուկաներին կապված են, գլխավորապես հանքահումքային ապրանքների արտահանմամբ, որը փաստում է վերջիններիս տեխնոլոգիական հետամնացության մասին: Տեխնոլոգիական հետամնացության հաղթահարումը պահանջում է հսկայածավալ ներդրումներ և վարկային ռեսուրսներ:

Միջազգային մի շարք հեղինակավոր կազմակերպությունների կողմից իրականացվող ամենամյա վարկանիշային գնահատականներում ԵԱՏՄ երկրների զբաղեցրած տեղերը մտահոգիչ են (Աղյուսակ 3): Բազմաթիվ ենպիրիկ հետազոտություններում ամրագրված է այն գաղափարը, որ որքան պետության մեջ պաշտոնյաների կոռուպացիայից անվտանգության աստիճանը բարձր է, այնքան այդ երկիրը պակաս գրավիչ է օտարերկրյա ներդրումների համար⁶: Խոսքը հատկապես վերաբերում է կոռուպցիայի ընկալման համաթվին և տնտեսական ազատության վարկանիշին: Կոռուպցիայի աճը հանգեցնում է պետության բյուջետային եկամուտների անկմանը, քանի որ այն մի կողմից հակախթանող ազդեցություն է ունենում սուբյեկտների տնտեսական ակտիվության վրա, իսկ մյուս կողմից՝ ֆիսկալ մարմինների բարձր կոռուպցիան նպաստում է հարկային վճարների հավաքագրման նվազմանը: Ինչպես ցույց են տալիս Արժույթի միջազգային հիմնադրամի փորձագետներ Վիտո Տանզիի և Յամիդ Դավուդիի հետազոտությունները, մեկ կետով կոռուպցիայի ընկալման համաթվի նվազումը հանգեցնում է բյուջեի եկամտային մաս - ՅՆԱ հարաբերակցության 1.5%, բյուջեի հարկային մուտքեր - ՅՆԱ՝ 2.7% կրճատմանը և 1.3%-ով ավելանում է ոչ հարկային մուտքեր - ՅՆԱ հարաբերակցությունը⁷:

2016թ. 2014 թ. համեմատությամբ, Ռուսաստանում Կոռուպցիայի ընկալման համաթիվը բարելավվել է 2 միավորով, Ղազախստանում՝ չի փոփոխվել, Բելառուսում բարելավվել է 9 միավորով, Ղրղզստանում վատթարացել է 1 միավորով, իսկ Յայաստանում՝ 4 միավորով:

	Ռուսաստան	Ղազախստան	Բելառուս	Յայաստան	Ղրղզստան
Կոռուպցիայի ընկալման համաթիվ (177 երկիր)	134	132	79	113	137
Տնտեսական ազատության վարկանիշ (166 երկիր)	153 Առավելապես ոչ ազատ տնտեսություն	68 Չափավոր տնտեսական ազատություն	157 Ոչ ազատ տնտեսություն	54 Չափավոր տնտեսական ազատություն	96 Առավելապես ոչ ազատ տնտեսություն
Բիզնեսի վարման դյուրինությունը (189 երկիր)	51	41	44	35	67
Աշխարհի ամենաանվտանգ երկրները (162 երկիր)	150	72	103	112	111
Գլոբալ մրցունակության համաթիվ (138 երկիր)	43	53	-	79	111

Աղյուսակ 3.

ԵԱՏՄ երկրների տեղը՝ ըստ տարբեր վարկանիշային ցուցանիշների 2016 թ. դրությամբ⁸

Ռուսաստանը և Ղրղզստանը առավելապես ոչ ազատ տնտեսություն ունեցող երկրներ են, Բելառուսը՝ ոչ ազատ, իսկ Յայաստանն ու Ղազախստանը՝ չափավոր ազատ տնտեսություն ունեցող երկրներ են: Այսինքն, երկրներից ոչ մեկում ազատ շուկայական հարբերություններ, ըստ էության, չի ձևավորվել: Այդ առումով, տարածաշրջանային տնտեսական ինտեգրումը, որը զարգանում է ազատ, առանց էական խոչընդոտների շուկայական հարաբերությունների հիմքի վրա, այս մակարդակում բախվելու է առանձին երկրների տնտեսական քաղաքականության տարբերությունների հետ:

Տնտեսական միության հաջողությունները կախված են, առաջին հերթին, տնտեսական դաշտի միօրինականացումից, ունիֆիկացումից: Ուստի, այդ առումով տնտեսական դիվանագիտությունը բազմակողմ բանակցությունների միջոցով կարող է համահարթել այն «տարածքը», որը կնպաստի միջտարածաշրջանային գործնական կապերի զարգացմանը: Բիզնեսի վարման դյուրինությունը ուսումնասիրվող երկրներում զրեթե գտնվում է նույն մակարդակի վրա, իսկ անվտանգության առումով Ռուսաստանն անգերազանցելի է, չնայած որ միայն Ղազախստանի համաթիվն է համեմատաբար փոքր:

Վերջին համաձայնաբեր հատկապես բացասական ազդեցություն կարող է ունենալ ոչ միայն փոխադարձ ներդրումների, այլև օտարերկրյա ներդրումների ներգրավման առումով, քանի որ պակաս անվտանգությունը ծնում է լրացուցիչ քաղաքական և տնտեսական ռիսկեր:

Գլոբալ մրցունակության համաթիվը համեմատաբար բարձր է Ռուսաստանում և Ղազախստանում, իսկ Ղրղզստանի ցուցանիշն ունի վատագույն արժեքը: Ճիշտ է Յայաստանը 2015-2016 թթ. համեմատությամբ 2017 թ.-ին իր դիրքերը երեք կետով բարելավել է, սակայն ետ է մնում նույնիսկ հարևան երկրներից (Վրաստան՝ 59-րդ տեղ, Իրան՝ 76-րդ, Ադրբեջան՝ 37,

⁶ Mauro, Paolo (1995), 'Corruption and Growth', 110(3) *Quarterly Journal of Economics*, 681-712; Wei, Shang-jin (1997b), 'Why Is Corruption So Much More Taxing Than Tax? Arbitrariness Kills', *NBER Working Paper Series*, WP 6255. Wei, Shang-jin (1999), 'Foreign Direct Investment and Economic Growth in EP and IS Countries: The Role of Corruption', 30(12) *World Economy*, 1843-1854.

⁷ Tanzi, Vito and Hamid R. Davoodi (1997), 'Corruption, Public Investment and Growth', *IMF Working Paper*, WP/97/1

⁸ Աղյուսակը կազմվել է <http://www.doingbusiness.org/-/media/WBG/DoingBusiness/Documents/Annual-Reports/English/DB16-Full-Report.pdf>, <http://nickdegolden.ru/samey-bezopasnye-strany-miral/>, http://www3.weforum.org/docs/GCR2016-2017/05FullReport/TheGlobalCompetitivenessReport2016-2017_FINAL.pdf կայք էջերում բերված տվյալների հիման վրա:

Թուրքիա՝ 55-րդ տեղ): Դա փաստում է համագործակցող երկրների մրցակցային թույլ առավելությունների, ինովացիաների և բիզնես ակտիվության սահմանափակ հնարավորությունների, հետևաբար և զարգացման մեկնարկային թույլ պայմանների մասին:

ԵԱՏՄ երկրների կողմից օտարերկրյա վարկային ռեսուրսների ներգրավումը հանգեցրել է դրանցում վարկային բեռի ավելացմանը, որի պայմաններում տնտեսության կառուցվածքային արմատական բաեփոխումների իրականացման համար պահանջվող ֆինանսական միջոցների ներգրավումը դառնում է ռիսկային (Աղյուսակ 4):

Աղյուսակ 4
ԵԱՏՄ երկրների արտաքին պարտքը 2011-2016 թթ. մլն. ԱՄՆ դոլար⁹

Երկիրը	Ցուցանիշը	2011	2012	2013	2014	2015	2016
Հայաստան	Ընդամենը արտաքին պարտք	7.409	7.638	8.679	8.553	8.928	9.953
Հայաստան	Արտաքին պարտք համախառն ազգային եկամտի մեջ %	70.58	69.17	73.52	70.39	81.43	92.42
Բելառուս	Ընդամենը արտաքին պարտք	33.932	33.755	39.573	40.013	37.934	37.515
Բելառուս	Արտաքին պարտք համախառն ազգային եկամտի մեջ %	56.08	52.56	54.32	52.37	70.25	83
Ղազախստան	Ընդամենը արտաքին պարտք	124.324	135.526	149.703	157.694	153.381	163.757
Ղազախստան	Արտաքին պարտք համախառն ազգային եկամտի մեջ %	75.31	75.33	70.78	79.33	88.68	135.13
Ղրղզստան	Ընդամենը արտաքին պարտք	5.485	6.025	6.803	7.264	7.51	7.876
Ղրղզստան	Արտաքին պարտք համախառն ազգային եկամտի մեջ %	99.05	93.63	98.43	101.44	116.98	125.25
Ռուսաստան	Ընդամենը արտաքին պարտք	544.308	591.785	668.458	549.592	467.688	524.685
Ռուսաստան	Արտաքին պարտք համախառն ազգային եկամտի մեջ %	27.61	28.15	31.07	27.52	35.19	42.02

Կարելի է եզրակացնել, նաև որ տնտեսական դիվանագիտության, ինչպես նաև ազգային տնտեսության վրա պետության ակտիվ ներգործության այլ գործառնությունների հնարավորությունները, անցած ժամանակաշրջանում, ԵԱՏՄ երկրներում բավարար չեն օգտագործվել: Դրա արդյունքում, համաշխարհային տնտեսական համակարգում այդ երկրների արդյունավետ դիրքավորման խնդիրներն ամբողջությամբ չեն լուծվել, որը իր հերթին, բացասաբար է անդրադարձել երկրների միջազգային մրցունակության վրա:

*Ներկայացվել է 18.02.2018թ.
Ընդունվել է տպագրության 28.02.2018թ.*

⁹ Տվյալները վերցված են Արժույթի միջազգային հիմնադրամի պաշտոնական կայք էջից՝ <http://data.imf.org/?sk=388DFA60-1D26-4ADE-B505-A05A558D9A42&slid=1479329132316>